Ծանուցում

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման՝ 2017 թվականի մարտի 21-ին ժամը 14:00-ին ՀՀ Լոռու մարզի Ալավերդու քաղաքապետարանում սահմանված կարգով տեղի կունենա հանրային քննարկում (III փուլ)՝ էլէկտրամատակարարման հուսալիության ծրագրի «110կՎ Լալվար և Նոյեմբերյան գծի փոխարինում» բաղադրիչի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

Գործունեության իրականացումը շրջակա միջավայրի վրա կունենա որոշակի ազդեցություն:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում՝ հասցե՝ Զորավար Անդրանիկի 1, ք. Երևան, ՀՀ (010 72 02 70) կամ http://www.hven.am պաշտոնական կայքում, կամ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու քաղաքապետարանում: Գրավոր դիտողություններ և առաջարկություններ կարելի է ներկայացնել ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: